

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ապրիլի 2005 թվականի N 449-Ն

ԲԱՐՃՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետին ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի «Մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը հաստատելու մասին» N 1079-Ն որոշումը՝ բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների մասով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2005 թ. ապրիլի 18
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2005 թվականի
ապրիլի 14-ի N 449-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲԱՐՃՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները (այսուհետ՝ չափորոշիչներ) ձևավորվում և հաստատվում են Հայաստանի Հանրապետությունում գործող բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթության յուրաքանչյուր մասնագիտության (դրա մեջ մտնող մասնագիտացումների հաշվառմամբ) համար:

2. Զափորոշիչի պահանջների ապահովումը պարտադիր է տվյալ մասնագիտությամբ (մասնագիտացմամբ) ուսուցում իրականացնող հաստատության համար:

3. Յուրաքանչյուր մասնագիտության (մասնագիտացման) համար հաստատվում է մեկ չափորոշիչ:

II. ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. Չափորոշիչն ապահովում է՝

- ա) բարձրագույն մասնագիտական կրթության որակը.
- բ) բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների գործունեության գնահատման հիմքը.
- գ) եվրոպական և այլ օտարերկրյա պետությունների կրթական չափորոշիչների հետ համեմատելիության հնարավորությունները.
- դ) եվրոպական և այլ օտարերկրյա պետությունների բարձրագույն մասնագիտական ու հետբուհական կրթության մասնագիտական որակավորումների և փաստաթղթերի ճանաչումն ու համարժեքությունը:

5. Չափորոշիչը ներառում է՝

- ա) բարձրագույն մասնագիտական կրթության և հետբուհական հիմնական կրթական ծրագրերին վերաբերող ընդհանուր պահանջները.
- բ) բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի, իրականացման պայմանների, այդ թվում՝ պրակտիկաների, սովորողների ամփոփիչ ատեստավորման ձևերի, շրջանավարտների պատրաստման մակարդակին վերաբերող պահանջները.
- գ) բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթության հիմնական կրթական ծրագրերով ուսուցման կազմակերպման ժամկետները և կրեդիտային միավորների քանակը:

6. Չափորոշիչն ընդգրկում է հետևյալ բաղադրիչները՝

- ա) մասնագիտության (մասնագիտացման) անվանումը.
- բ) մասնագիտության (մասնագիտացման) ընդհանուր բնութագիրը.
- գ) մասնագիտության (մասնագիտացման) կրթության ձևերը.
- դ) մասնագիտության (մասնագիտացման) յուրացման ժամկետներն ըստ կրթության հիմքի.
- ե) շրջանավարտին շնորհվող մասնագիտական որակավորումը.
- զ) շրջանավարտի մասնագիտական որակավորման բնութագիրը.
- է) բարձրագույն մասնագիտական կրթությամբ շրջանավարտի հետագա կրթության հնարավորությունը.
- ը) պահանջներ մասնագետի պատրաստման նկատմամբ՝
ընդհանուր պահանջներ,
պահանջներ՝ հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր մասնագիտական, հատուկ մասնագիտական առարկաների գծով,
բարձրագույն մասնագիտական կրթության պրակտիկաների կազմակերպմանը և անցկացմանը վերաբերող պահանջներ,
պահանջներ՝ մասնագիտության (մասնագիտացման) ամփոփիչ ատեստավորման գծով,
պահանջներ մասնագիտության (մասնագիտացման) հիմնական կրթական ծրագրի բովանդակության նվազագույն ծավալի նկատմամբ՝ ըստ առարկայախմբերի ու առարկաների՝ դրանց ուսուցման համար առավելագույն և անհրաժեշտ ժամաքանակներով.
- թ) պահանջներ ուսումնական գործընթացի կազմակերպման ու ապահովման նկատմամբ.
- ժ) պահանջներ միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման նկատմամբ:

III. ՉԱՓՈՐՈՇՉԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՈՒՄԸ

7. Չափորոշիչի նախագիծն ըստ մասնագիտությունների և կրթական աստիճանների (բակալավր, մագիստրոս, հետազոտող), պետական կառավարման լիազորված մարմնի հանձնարարությամբ, մշակում է բարձրագույն ուսումնական հաստատության (հաստատությունների), գիտական կազմակերպության (կազմակերպությունների) աշխատողների ընդգրկմամբ ստեղծված համատեղ աշխատանքային խումբը, որի կազմը, բուհերի և գիտական կազմակերպությունների ներկայացմամբ, հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը:

Աշխատանքային խումբն ընդգրկում է տվյալ ոլորտի զարգացման համար պատասխանատու քաղաքացիական ծառայողների, բնագավառի առաջատար մասնագետների, գործատուների: Դրա կազմում կարող են ընդգրկվել նաև գիտական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչներ, այլ մասնագետներ:

8. Չափորոշիչի նախագիծը ներկայացվում է փորձագիտական հանձնաժողովին, որի կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը:

Փորձագիտական հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ ոլորտի զարգացման համար պատասխանատու քաղաքացիական ծառայողներ, բնագավառի առաջատար մասնագետներ: Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել նաև գիտական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչներ, այլ մասնագետներ:

IV. ՉԱՓՈՐՈՇԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

9. Փորձագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա պետական կրթական չափորոշիչները հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը (ռազմական, ոստիկանական և բժշկական (այդ թվում՝ ռազմաբժշկական) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության չափորոշիչների դեպքում՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան պետական կառավարման լիազորված մարմինների հետ նախապես համաձայնեցված):

(9-րդ կետը խմբ. 22.07.10 N 909-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան